ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր, ՊՐՈՖԵՍՈՐ ՍՐԲՈՒՀԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

27-ը հոկտեմբերի, 2023թ.

ԿԱՐԾԻՔ

Սյուզաննա Թադևոսյանի «Եղանակավորման իմաստաշարահյուսական միջոցները ժամանակակից ֆրանսիական լրագրային խոսույթում» թեմայով ատենախոսության վերաբերյալ, ներկայացված Ժ. 02. 07. «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման

Սույն ատենախոսության թեմայի ընտրությունը բացատրվում է եղանակավորման շարահյուսական հյուսվածքին և հաղորդակցական բովանդակությանը վերաբերող մի շարք հիմնարար խնդիրների ոչ բավարար ուսումնասիրությամբ: Եղանակավորության լեզվական միջոցների ուսումնասիրության ոլորտում առկա իրավիճակը բնութագրվում է ինչպես եղանակավորություն հայեցակարգի հիմքում ընկած հատկանիշների, այնպես էլ այդ հասկացության ծավալի առնչությամբ:

Անհերքելի է թեմայի արդիականությունը, քանի որ եղանակավորման շարահյուսական և իմաստային կառուցվածքի խնդրի որոշ ասպեկտներ մեծ ուշադրության են արժանացել և ուշադրության են արժանանում լեզվաբանության մեջ: Լրագրողական դիսկուրսը ինքնին ակտուալ տեքստ է, որը կյանքի է կոչվել կոնկրետ իրավիճակով և կոնկրետ երևույթներով, որոնք կապված են շրջապատող աշխարհի իրադարձությունների հետ և գոյություն ունեն որոշակի ժամանակային տարածքում: Տեղեկատվական հոսքերի հետ համարժեք փոխազդեցությունը, լրատվամիջոցների տեքստերի քննադատական ընկալումն ու մեկնաբանումը դառնում են ժամանակակից հասարակության կրթական համակարգի հրատապ խնդիրներից մեկը:

Աշխատանքի կառուցվածքը տրամաբանական է և հիմնավորված: Այն կառուցված է առկա նյութին համապատասխան: Ատենախոսության մեջ հստակ ներկայացված են աշխատանքի նպատակը, գիտական նորույթը, խնդիրները, ուսումնասիրվող առարկան, հետազոտական մեթոդները, տեսական և գործնական նշանակությունը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածություն բաժնում հեղինակը բավական հանգամանորեն ներկայացնում և հիմնավորում է ատենախոսության նպատակը, արդիականությունը, նորույթը և տեսական ու գործնական նշանակությունը, լեզվաբանական մանրակրկիտ վերլուծության է ենթարկում եղանակավորություն հասկացությունը, հենվելով հայ, ռուս և ֆրանսիացի լեզվաբանների աշխատությունների վրա:

Առաջին գլուխը նվիրված է եղանակավորության լեզվական դրսևորման մակարդակներին, և բառաքերականական միջոցներին ժամանակակից լեզվաբանության համատեքստում:

Երկրորդ գլխում լուսաբանվում են ֆրանսիական լրագրային խոսույթի առանձնահատկությունները:

Երրորդ գլուխը վերաբերում է լրագրային խոսույթում եղանակավորության բազմիմաստության դրսևորումներին:

Ատենախոսը առաջադրված նպատակին հասնելու համար լուծում է մի շարք խնդիրներ.

– բացահայտում է «խոսույթ», «լրագրային խոսույթ» հասկացությունները և դրանց իմաստագործառական և իմաստագործաբանական արժեքները:

- բնութագրում է արտակա և ներակա մակարդակներում եղանակավորման միջոցները, ալեթիկ և դեոնթիկ եղանակավորման դրսևորման մակարդակները:

– լրագրողական խոսքում բնորոշում է հեղինակի և հասցեատիրոջ կատեգորիաները;

– նկարագրում է լրագրողական խոսքի բառային և շարահյուսական առանձնահատկությունները և ֆրանսիական խոսույթին բնորոշ հատկությունները:

Սյուզաննա Թադևոսյանը, մեկնաբանելով լրագրում հաղորդվող անուղղակի խոսքի սուբյեկտիվության մեխանիզմները, իրավացիորեն գտնում է, որ այն չպետք է դիտվի որպես ասույթ, այլ որպես ասություն, որի մասին հայտարարվում է: Ինչպես ճիշտ նկատում է ատենախոսը, ուղղակի խոսքի օգտագործումը լրագրողի օբյեկտիվ երևալու ցանկությունն է, չնայած լրագրողն ուղղակի փորձում է իր տեսակետն ապացուցել, իրականում ասված բառերով և փաստարկված խոսքի միջոցով՝ իր տեղեկատվության հավաստիությունն ապահովելու նպատակով:

Ուշագրավ է ատենախոսի կատարած ուսումնասիրությունը կապված՝ հայ և ֆրանսիական լեզվաբանության մեջ կիրառվող եղանակավորող բառեր եզրույթի և եղանակավորիչ եզրույթների հետ, որոնք, պարզվում է, ունեն տարբեր իմաստային հագեցվածություն:

Աշխատության հեղինակը հետազոտական թեմայի վերաբերյալ կատարել է գիտական գրականության ուսումնասիրություն, վերլուծություն և ֆրանսիական թերթերի և ամսագրերի հոդվածների հետազոտություն:

Ժամանակակից մեդիա գրագիտություն մակարդակի բարձր որակ ապահովելու նպատակով, ատենախոսությունը կարող է գործնական կիրառում ունենալ ժուռնալիստիկայի ֆակուլտետի ուսանողների համար հատուկ մշակված մագիստրոսական ծրագրի դասընթացում:

Հարկ է նշել նաև օգտագործված գրականության հարուստ ցանկի առկայությունը աշխատանքում, որոնց զգալի մասը օբյեկտիվորեն հնարավոր չէ ներառել որպես հղում:

Համացանցային կայքերի որոշ մասը անհասանելի է և չի համապատասխանում ուսումնասիրվող թեմային: Նշված դիտողությունները բոլորովին չեն նսեմացնում Սյուզաննա Թադևոսյանի կատարած օրիգինալ հետազոտությունը:

Սեղմագրում ներկայացված դրույթները ևս համապատասխանում են ատենախոսության բովանդակությանը:

Կարծում ենք, որ ատենախոսությունը բավարարում է ՀՀ ԲՈԿ-ի՝ բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճանի հայցման համար ներկայացվող պահանջները, և ատենախոս Սյուզաննա Գագիկի Թադևոսյանը արժանի է ժ. 02. 07 «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Ատենախոսությունը քննարկվել է և վերջինիս վերաբերյալ եզրակացությունը հաստատվել է Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի ռոմանագերմանական լեզուների և դրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի 2023 թվականի հոկտեմբերի 9-ի թիվ 2 արտահերթ նիստում՝ բ.գ.թ., դոցենտ Տ. Միքայելյանի, բ.գ.թ., դոցենտ Գ. Մելիքյանի, մ. գ. թ., դոցենտ Ա. Եղիազարյանի, բ.գ.թ., պրոֆեսոր Ե. Մխիթարյանի, մ. գ. թ., դոցենտ Ս. Բաղդասարյանի և բ. գ. թ., դոցենտ Ռ. Ասատրյանի մասնակցությամբ:

Ռոմանագերմանական լեզուների ամբիոնի վարիչի պաշտոնակատար

բ.գ.թ., դոցենտ ԳՈՀԱՐ ՄԵԼԻՔՅԱՆ

Գոհար Մելիքյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՊՄՀ գիտական քարտուղար, մ. գ. թ., դոցենտ ՄԱՐԻԱՄ ԻՍՊԻՐՅԱՆ

27-ը հոկտեմբերի, 2023թ.